ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Ա. ԱԲՈՎՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբովյան.

Ի պատասխան Ձեր 26.11.2018թ. հ.01/14Մ գրության՝ տեղեկացվում է.

Քաղաքացի Նելլի Աթոյանը 22.10.2018թ. դիմել է Երևանի քաղաքապետարան, Աջափնյակ վարչական շրջանի Էստոնական փողոցի հ.10 շենքի հ.33 բն. հասցեում հովարի իրականացման թույլտվության տրամադրման համար: 26.10.2018թ. հ.Ա-8625 գրությամբ քաղաքացուն տեղեկացվել է, որ բազմաբնակարան շենքերի լուսային բացվածքների վրա հովարների մասնակի իրականացումն անընդունելի է՝ հաշվի առնելով շենքի ծավալատարածական հորինվածքի պահպանման նկատառումները: Ինչ վերաբերում է տվյալ ճակատում առկա հովարներին, տեղեկացվում է, որ դրանց իրականացման համար Երևանի քաղաքապետարանի կողմից թույլտվություն չի տրամադրվել, իսկ գրությամբ նշված ՀՀ կառավարության 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N912-Ն որոշման 8.1 կետի իրավանորմը չի կարգավորում շվաքարանների տեղադրման և թույլտվությունների տրամադրման կարգը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ